Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 19

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<07>> դեկտեմբերի 2023թ. քաղաք Երևան

2023 թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը:
Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու ներկայացված 1 հայտի քննարկում:

2.Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

3.Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության ՏՄՏԶ 00054 լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու և նոր ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

4.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

5.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

6.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

7. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից օդանավակայանի տաքսի ծառայության կազմակերպման լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

Քննարկվեց՝ <<ՋԻ-ԳԱՐԱԺ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի նոյեմբերի 13-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և նոյեմբերի 20-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի նոյեմբերի 13-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու հայտ՝ ՀՀ, Տավուշի մարզ, համայնք Նոյեմբերյան, ք. Նոյեմբերյան, Շիրազի փողոց 39 գործունեության վայրում: 2023 թվականի նոյեմբերի 20-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակիցների կողմից, որի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացվել է 24.11.2023 թ. մտից՝ Մ/71435 գրությամբ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՋԻ-ԳԱՐԱԺ>> ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝ «ԱՎԱՆ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի նոյեմբերի 9-ի հայտը և հայտին կից ներկայացված

փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի նոյեմբերի 9-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի նոյեմբերի 10-ի ՆՄ/25.1/34540-2023 գրությամբ Կազմակերպությանը տեղեկացվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների վերաբերյալ, մասնավորապես՝ առ այն, որ հայտին կից փաստաթղթերում բացակայում է ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ տեխնիկական զննության համար նախատեսված տարածքների սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենը: Կազմակերպության ներկայացված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14062021-01-022 վկայականի տվյալների համաձայն՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Դ. Մալյան փողոց 55 հասցեում գտնվող շինությունը գրանցված է Արարատ Կորյունի Հակոբյանի անվամբ և բացակայում է շինության կամ շինությունների բնութագրերը: Դիմումում նշված է, որ ներկայացվում է շինության հատակագիծը կազմած ընկերության աշխատակցի որակավորման վկայականի պատճենը, մինչդեռ հայտին կից ներկայացված նյութերում նշված փաստաթուղթը առկա չէ: Դիմումին կից փաստաթղթերում բացակայում են կոմպրեսորի, դողերի ճնշաչափերի հավաքածուի և կոմպրեսորի մանոմետրի առկայությունը հավաստող փաստաթղթերը:

Միաժամանակ Կազմակերպությանը տեղեկացվել է, որ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը չի ներկայացրել լրացուցիչ նյութեր և չի վերացրել 2023 թվականի նոյեմբերի 10-ի ՆՄ/25.1/34540-2023 գրությամբ նշված թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԱՎԱՆ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ	0 կողմ, 5 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. «Սմարտ-Սելլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ՏՄՏՋ N 00054 լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների N0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու և ունիվերսալ հոսքագծի նոր ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝ «Սմարտ-Սելլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի նոյեմբերի 9-ի դիմումը՝ Ընկերությանը տրամադրված ՏՄՏՋ N 00054 լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների N0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու և ունիվերսալ հոսքագծի նոր ներդիր տրամադրելու համար ներկայացված դիմումը:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ «Սմարտ-Սելլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2021 թվականի դեկտեմբերի 23-ին տրամադրվել է Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության ՏՄՏՋ N 00054 լիցենզիան և թեթև տրանսպորտային

միջոցների N 0001 ներդիրը: 2023 թվականի նոյեմբերի 9-ին Ընկերությանը դիմել է ՏՄՏԶ N 00054 լիցենզիայի N 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու և լիցենզիայի ունիվերսալ հոսքագծի նոր ներդիր տրամադրելու համար: Կազմակերպության կողմից տնօրինվող տարածքը բավարարում է ունիվերսալ հոսքագծի համար ներկայացվող պահանջներին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ ունիվերսալ հոլովակավոր ստենդի և տրանսպորտային միջոցների ղեկային վարման շարժաբերի և կախոցքի վիճակի ստուգման ստենդի տեխնիկական պարամետրերը պարունակող տեխնիկական անձնագրերը և նրանց ստուգաչափման վկայականները՝ տրամադրված Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի կողմից:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՍՄԱՐՏ-ՍԵԼԼ>> ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4.«ԲՈ ՄՈՆԴ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N05346 լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

«ԲՈ ՄՈՆԴ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N05346 լիցենզիայի N00007 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց Կազմակերպության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N05346 լիցենզիայի N00007 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ N00007 ներդիրի բնօրինակը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԲՈ ՄՈՆԴ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5.«ԲՈ ՄՈՆԴ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N05346 լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

«ԲՈ ՄՈՆԴ ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N05346 լիցենզիայի 1 ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց Կազմակերպության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N05346 լիցենզիայի 1 ներդիր տրամադրելու մասին և տեղեկացրեց, որ Կազմակերպությունը ներկա պահին գործում է 3 ներդիրներով և դիմումով հայցում է տրամադրել ևս 1 ներդիր:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԲՈ ՄՈՆԴ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

6. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝ Ֆիզիկական անձ՝ Հովհաննես Սուրենի Ստեփանյանի 17.11.2023թ. դիմումը և 05.12.2023թ. ի լրումն ներկայացված նյութը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Ֆիզիկական անձ՝ Ռաֆայել Գրիգորիի Կասպարյանի 17.11.2023թ. դիմումը և 05.12.2023թ. ի լրումն ներկայացված նյութը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ նիստի քննարկմանը ներկայացված հայտը ուսումնասիրվել է լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից, ստուգվել են ներկայացված ավտոմոբիլի տեխնիկական զննություն անցնելու փաստը և գազաբալոնների վկայագրման և ավտոմոբիլի սակաչափիչի ստուգաչափման փաստաթղթերի բնօրինակները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՈՒՐԵՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

7.«ԼԻՄԻՏԼԵՍՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից օդանավակայանի տաքսի ծառայության կազմակերպման SO N00001 լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

«ԼԻՄԻՏԼԵՍՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի նոյեմբերի 21-ի դիմումը և նոյեմբերի 29-ի գրությունը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից օդանավակայանի տաքսի ծառայության կազմակերպման SO N00001 լիցենզիայի թվով 4 /չորս/ նոր ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց Կազմակերպության 2023 թվականի նոյեմբերի 21-ի և 29-ի դիմումները՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից օդանավակայանի տաքսի ծառայության կազմակերպման ՏԾ N00001 լիցենզիայի թվով 4 /չորս/ նոր ներդիրներ տրամադրելու մասին և տեղեկացրեց, որ Կազմակերպությունը ներկա պահին գործում է 20 ներդիրներով և դիմումով հայցում է տրամադրել ևս 4 ներդիրներ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԼԻՄԻՏԼԵՍՍ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան